«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 03/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 19.04.2017թ.ժամը 17.10

Համաձայն ,11.04.2017թ-ին ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 10/5591-17, 10/5592-17 և 10/5606-17 գրությունները «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի և «Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործերով կառավարիչներ՝Տիգրան Հարությունյանի և Մայիս Հայրապետյանի գործողությունների/անգործության/ նկատմամբ վերահսկողության գործառույթի իրականացման նպատակով:

«Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի և «Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործերով կառավարիչներ Մայիս Հայրապետյանի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումներում նշված փաստական հանգամանքների քննության համար ս/թ-ի Ապրիլի 19-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Աղամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանը:
Դիմումատու՝Հակոբ Վարդանյանը :
«Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Տիգրան Հարությունյանը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Աղամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ,նախագահ՝«Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Տիգրան Հարությունյանը:
«Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝Մայիս Հայրապետյանը և դիմումատու՝Հակոբ Վարդանյանը,նիստին չէին ներկայացել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
«Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի և «Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործերով կառավարիչներ Մայիս Հայրապետյանի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և 11.04.2017թ-ին ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 10/5591-17, 10/5592-17 և 10/5606-17 գրություններ-դիմումներում նշված փաստական հանգամանքների քննարկման հարցերը.

Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում,ինքը որպես հանձնաժողովի անդամ և նախագահող ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկեց այս նիստը վարելու համար ընտրել նիստը վարչող նախագահող և քվեարկությունը կազմարպել առանց իր ձայնի:

Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու առաջարկելով,որպես հանձնաժո

ղովի այս նիստին նախագահող՝Արմենակ Աղամյանի թեկնածությունը,հարցը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ –«Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի և «Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործերով կառավարիչներ Մայիս Հայրապետյանի վարքագծերի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և 11.04.2017թ-ին ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացվել է թիվ 10/5591-17, 10/5592-17 և 10/5606-17 գրություններ- դիմումներում նշված փաստական հանգամանքների քննարկման համար, ս/թ-ի Ապրիլի 19-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստով ընդունել հանձնաժողովի անդամ-նախագան Տիգրան Հարությունյանի ինքնաբացարկը և սույն նիստում նախագահող ընտրել հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանին:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական հանձնաժողովի 19.04.2017թ-ի նիստով նախագահող՝Արմենակ Աղամյանը ներկայացրեց,11.04.2017թ-ին ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված թիվ 10/5591-17, 10/5592-17 և 10/5606-17 գրությունները և առաջարկեց քանի որ գրությունները և դրանց կից դիմումները վերաբերվում են երկու սնանկության գործով կառավարիչների և տարբեր են փաստական հանգամանքները,դիմումները և դրանց վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը ու կարգապահական վարույթ հարուցելու հարցերը քննարկել և քվեարկել առանձին- առանձին:
Հանձնաժողովի անդամները համաձայնեցին առաջարկի հետ,որից հետո նախագահողը ներկայացրեց ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված թիվ 10/5592-17 գրությունը,ըստ որի նախարարությունը վերահասցեյագրել էր,«Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի աշխատակից Հակոբ Վարդանյանի դիմումը:Նախագահողը ներկայացրեց նաև նույն Հակոբ Վարդանյանի 13.04.2017թ-ի դիմումը հասցեյագրված՝ ՀՀ Արդարադատության Նախարարին և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի նախագահին,առ այն որ ինքը բողոքներ չունի սնանկության վարույթից և սնանկության գործով կառավարչից և խնդրել է դիմումը թողնել անհետևանք և առանց քննության
Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումները և գտան որ եթե դիմումատուն հրաժարվել է իր դիմումից և նշված փաստական հանգամանքներից ու ավելին իր 13.04.2017թ-ի դիմում նշում է նոր փաստական հանգամանքներ սնանկության գործով կառավարչի վարքի վերաբերյալ,ուստի կարգապահական վարույթ հարուցելու կարիք չկա:
Նախագահողը ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված թիվ 10/5592-17 գրության՝«Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի աշխատակից Հակոբ Վարդանյանի դիմումում առծածված հանգամանքներում, «Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման,կարգապահական վարույթի հարուցման հարցը,դրեց քվեարկության.
ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ – ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված թիվ 10/5592-17 գրության՝«Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի աշխատակից Հակոբ Վարդանյանի դիմումում առծածված հանգամանքներում, «Սևանի ՃՇՇ»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Մայիս Հայրապետյանի «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման,կարգապահական վարույթի հարուցում մերժել, կարգապահական վարույթի նախապատրաստական փուլում դիմումատուի դիմումից հրաժարվելու պատճառաբանությամբ:

ԼՍԵՑԻՆ –Նախագահողը ներկայացրեց ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված թիվ 10/5591-17 և 10/5606-17 գրությունները,ըստ որի նախարարությունը վերահասցեյագրել էր՝«Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի աշխատակից Արթուր Դավթյանի և մյուսների ու Վալենտինա Վերդյանի էլեկտրոնային դիմումները:

Ներկայացրեց նաև «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի կողմից ներկայացված դատարանի «Առողջացման ծրագրի հաստատման» վերաբերյալ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուրչ իրավասության դատարանի 13.06.2016թ-ի որոշման լուսապատճենը,հաստատված և այս օրվա դրությամբ գործողության մեջ գտնվող առողջացման ծրագրի օրինակը,տեղեկանք վարույթի ընթացքում մարված պահանջների վերաբերյալ:

Որոնց հիմքով «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի վարքագծերի/անգործության/ վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը դրեց քննարկման,նշելով որ ներկայացված դիմումների ուսումնասիրությունից պարզվում է,որ էլեկտրոնային դիմումը ուղարկված է ընկերության նախկին աշխատակցի, գրանցված պարտատիրոջ աղջկա կողմից,ով իրավական առումով կապ չունի պարտապանի հետ,իսկ երկրորդ դիմումը գրված է պարտապան ընկերության մի խումբ նախկին աշխատակիցների կողմից և ներառում են փաստական հանգամանքներ,մասնավորապես՝ «…Տ.Հարությունյանը պատասխանում է,որ ձեզ տալու գումար չունենք,ում ուզում եք բողոքեք,ինչ ուզում եք արեք…» որպիսի փաստի վերհանման և քննարկման անհրաժեշտությունը իր կարծիքով առաջանում է և այդ կապակցությամբ առաջարկեց հարուցել կարգապահական վարույթ և քննել «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի վարքագծերի/անգործության/ հարցը:

Ձայնի իրավունք վերցրեց հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը,ով նշեց որ էլեկտրոնային եղանակով ուղարկված նամակը-դիմումը ուղղված է ՀՀ Վարչապետ՝Կ.Կարապետյանին և իր բնույթով ընդհանրացված է մի քանի պռոբլեմների լուծման համար,այդ թվում՝ուսանողության, նրանց վարձերի և ԲՈՒՀ -երի հետ հարաբերությունների,վարկային քաղաքականության և դրանց արդյունքների մասով,իսկ ինչ վերաբերվում է պարտապանին և սնանկության գործով կառավարչի գործողությունների,ապա այդ մասին ընդահմենը նշված է,որ առկա է 2 միլիոն գումար,որը վճարվում է աշխատավարձ,բայց դիմումատուն դժգոհ է վճարման կարգից և խնդրել է Վարչապետին օգնել իր հայրիկին այդ հարցերում:Ըստ էության կառավարչի գործողություն-ների բողոքարկման փաստ այս դիմում չկա,հետևաբար չկա նաև քննարկման թեմա:

Ինչ վերաբերվում է մի խումբ աշխատիկցների դիմումին,ապա այն իր մեջ ներառում է կոնկրետ արտահայտությունների հիշատակումներ,որը կարող է չհամապասխանել կառավարչի մասնագիտական վարքագծի կանոններին և ինքը նույնպես համաձայն է որ հարուցվի կարգապահական վարույթ,որի ընթացքում կարելի կլինի ճշտելու փաստական հանգամանքները

Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 1

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի նկատմամբ՝ ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ին վերահասցեյագրված 10/5591-17 և 10/5606-17 գրությունները,ըստ «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի աշխատակից Արթուր Դավթյանի և մյուսների ու Վալենտինա Վերդյանի էլեկտրոնային դիմումներում առծածված հանգամանքներում, սնանկության գործով կառավարչի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար,հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովում նախագահող՝Արմենակ Ադամյանին,ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Լսել սնանկության գործով կառավարչին

2.Ուսումնասիրել ներկայացվող փաստաթղթերը

Հանձնաժողովի անդամները,սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին:

Համաձայն աշխատանքային կարգի Հանձնաժողովի Նախագահը ձայնի իրավունք տվեց՝ սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանին:

Սնանկության գործով կառավարիչը ներկայացրեց սնանկության վարույթում կառավարչի կողմից, պահանջների բավարմանը ուղղված կատարված և կատարվելիք աշխատանքները, մասնավորապես կապված բողոքում հիշատակված աշխատավարձի պահանջներով գրանցված պարտատերերի:Ըստ կառավարչի աշխատավարձի պահանջներով գրանցվել են 209 պարտատեր,ընդհամենը՝102 745 976 ՀՀ դրամ պահանջով:Բոլորը գրանցված են վճարման /Գ/ հերթում:

Սնանկության վարույթը գտնվում է հաստատված առողջացման ծրագի կատարման փուլում, ըստ որի աշխատավարձի պահանջները պետք է բավարարվեն `ա/դեբիտորական պարտավորությունների հավաքարման ընթացքում առաջացած միջոցներից և բ/ արտադրական պռոցեսում չոգտագործվող գույքի իրացումից առաջացած միջոցներից:

Ինչպես դիմում նշված էր,որ 30 միլիոն դրամը,որը հավաքագրվել է ՀՀ բյուջեյից ետ ստանալու միջոցով,այնպես է այլ դեբիտորներից և իրացված գույքից առաջացած միջոցներից ընդհամենը ՝ 58 276 069 ՀՀ դրամի չափով/մինչև դիմումի գրման օրը/ և 2 միլիոն դրամ էլ դիմումից անկախ 01.04.2017թ-ին,առ այս օրվա դրությամբ՝ 60 276 069 ՀՀ դրամի չափով մարվել է /Գ/ վճարման հերթի 209 պարտատերերի պահանջները,որոնցից 139 պահանջ մարվել է ամբողջությամբ իսկ առ այս օրվա դրությամբ պահանջների ընդհամանը մնացորդը կազմում է՝ 42 469 907 ՀՀ դրամ, ընդհամենը 70 պահանջատիրոջ:Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց Պահանջների գրանցամատյանից քաղվածք և վճարման ստորագրած տեղեկագրերի լուսապատճենները, ուսումնասիրության համար,նշելով որ բոլոր պահանջատերերն էլ պահանջի բավարարում ստացել են,ուղղակի դիմումատուների պահանջները բավարարվել են մասնակի,այդ մասին և պահանջների բավարարմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ բազմաթիվ անգամներ հանդիպումներ են տեղի ունեցել պահանջատերերի հետ և այդ հանդիպումներին մասնակցել են այլ պաշտոնատար անձինք,այդ թվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմից ու ոչ մի անգամ դիմում նշված արտահայտություններ չի արվել այդ թվում նաև տնօրենի կողմից,քանի որ վերջին պահանջների բավարման ընթացքում տնօրենը այդ նույն դիմումատուների օգտին հրաժարվեց իրեն համամասնորեն վճարվող պահանջի բավարարումից,տալով իր համաձայնությունը մյուս վճարումից բավարարում ստանալու համար:

Կառավարիչը հայտնեց նաև,որ նախկինում պահանջները բավարավել են փոքրից մեծ կարգով քանի որ գումարները անբավարար են եղել անբողջությամբ խմբի պահանջները բավարարելու համար,հետագայում հիմնականում նույն դիմումատուների ցանկությամբ գումարները բաշխվում են համամասնորեն,ըստ պահանջների չափի,որի պատճառով բավարվող գումարները փոքր են, իսկ պահանջատերերը ցանկանում են ստանալ շատ կամ ամբողջությամբ,որպիսի պատճառաբանությամբ էլ բողոքներ են ներկայացնում տարբեր մարմիններին,այդ թվում նաև փորձել են օգտագործել ընտրությունները,իրենց կարծիքով կառավարչի վրա կողմնակի ազդեցության նպատակադրվածությամբ:

Կառավարիչը նշեց նաև,որ այս օրվա դրությամբ դեբիտորական պարտավորությունների բռնագանձման հայցեր է քննարկվում ընդհանուր իրավասության դատարաններում և Վերաքննի դատարանում,որի արդյունքներով հուսով է,որ ամբողջությամբ կմարվի /Գ/ վճարման հերթի պահանջները,բացի դրանից կատարվում են աշխատանքներ ՀՀ Բյուջեյից ետ ստացվող շուրջ՝ 40 000 000 ՀՀ դրամ գումարների ուղղությամբ,որը նույնպես գտնվում է դատական պռոցեսում,որ արդյունքները դրական լինելու դեպքում գումարները կուղղվեն պահանջների բավարարմանը:

Կառավարիչը նշեց,որ մինչ օրս իրեն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վարձատրություններից և ոչ մի լումա չի ստացել,դրամակ միջոցները ամբողջությամբ ուղղել են աշխատավարձի պահանջների բավարարմանը:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հարց ուղղեց սնանկության գործով կառավարչին,առ այն արդյոք առողջացման ծրագիրը հաստատված է դատարանի կողմից,կառավարիչը ներկայացրեվ դատարանի 13.06.2016թ-ի ԿԴ 0059/04/15 որոշումը,ըստ որի հաստավել էր ֆինանսական առողջացման ծրագիրը:

Հանձնաժողովի նիստի նախագահող՝Ա.Աղամյանը ըստ աշխատակարգի ներկայացված փաստաթղթերը հանձնեց հանձնաժողովի անդամների և խնդրեց ուսումնասիրելուց հետո սկսել քննարկում ըստ էության:.

Փաստաթղթերի ուսումնսիրությունից հետո ձայն խնդրեց հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյանը,ով մասնավորապես նշեց,որ ըստ էության սնանկության գործով կառավարիչ՝ Տ.Հարությունյանը,տվյալ սնանկության վարույթում կատարել է օրենքով սահմանված իր պարտականություններ և չի թերացել դրանց կատարման,ոչ մի կետում և բերված բողոքը ավելի շատ իր մեջ պարունակում է չփաստարված հայտարարություններ,որոնք հերքվում են կատրված աշխատանքի և հակափաստարկների ներկայացումից հետո,բացի դրանից ակնհայտ է սնանկության գործով կառավարչի կատարած հսկայական աշխատանքը,որի արդյունքում բավարարվել են պահանջների մոտ 60 տոկոսը,առանց կազմակերպության լուծարման գործընթացի,որի դեպքում կմեծանար կառավարչի օրենքով սահմանված հնարավորությունները պահանջներին բավարարում տալու ուղությամբ:

Մնացած անդամները համաձայնեցին Հ.Մարտիկյանի հետ:

Հանձնաժողովի Նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ – 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Տիգրան Հարությունյանի նկատմամբ՝ ՀՀ Արդարադատության Նախարարությունից՝«ՍԳԿԿ» ԻԿԿ-ին վերահասցեյագրված 10/5591-17 և 10/5606-17 գրությունները,ըստ «Գլաս Ուորլդ Քամփնի»ՓԲԸ-ի աշխատակից Արթուր Դավթյանի և մյուսների ու Վալենտինա Վերդյանի էլեկտրոնային դիմումներում առծածվված հանգամանքներում, սնանկության գործով կառավարչ՝Տիգրան Հարությունյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքերի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ, հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի Նախագահող՝ Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան